ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 2025 թվականի N 764-Ա

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 57-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք և Նոր Գյուղ բնակավայրերի միջնակարգ դպրոցի կառուցման նպատակով 2024 թվականի օգոստոսի 16-ին «Փարս Թաբլո» ՓԲԸ-ի հետ կնքված պետության կարիքների համար կապալային աշխատանքների գնման N ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/60-1 պայմանագրի շրջանակներում համաձայնագիր կնքելու նպատակով՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող օրը «Փարս Թաբլո» ՓԲԸ-ին տրամադրել նոր ծանուցում՝ կապալառուի կողմից ապահովումների ներկայացման համար սահմանելով քսանօրյա ժամկետ:

2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենին՝ սույն որոշման 1-ին կետով սահմանված ժամկետում «Փարս Թաբլո» ՓԲԸ-ի կողմից

ապահովումներ չներկայացվելու դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը միակողմանիորեն լուծել:

3. Սահմանել, որ սույն որոշման գործողությունը տարածվում է 2025 թվականի ապրիլի 21-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

12.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ